
**ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱՐԵՓՈ-
ԽՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՈՐՈՇ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈՐՁԸ**

ԶԱՆՁՈՒՂԱԶՅԱՆ Ա. Ս., ԲՐՈՒՏՅԱՆ Կ. Ա.

Մի շարք երկրներում հանրային հատվածի հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունների կազմումը հիմնվում են հաշվեգրման մեթոդի վրա: Մի քանի այլ երկրներ հայտարարել են այն մասին, որ պատրաստվում են ներդնել հաշվեգրման մեթոդը, մինչդեռ, մյուսները դեռևս քննարկում են այդ խնդիրը մոտ ապագայում իրականացնելու հարցը:

Հստակորեն իրարից տարանջատվում են, մի կողմից, հաշվեգրման մեթոդով հաշվառումն ու հաշվետվությունների կազմումը և, մյուս կողմից, հաշվեգրման մեթոդի վրա հիմնված հատկացումների համակարգը: Շատ երկրներ հետևում են առաջինին՝ առանց էապես փոփոխելու երկրորդը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ հաշվառման և հաշվետվությունների կազմման համակարգերում փոփոխության անհրաժեշտությունն անպայմանորեն չի ենթադրում փոփոխությունների անհրաժեշտություն¹ հատկացումների համակարգում:

Հաշվեգրման մեթոդով գործող հաշվապահական հաշվառման և տվյալների ներկայացման խնդիրը չի սահմանափակվում միայն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) անդամ երկրներով: ՏՀԶԿ-ի անդամ չհանդիսացող մի շարք երկրներ նույնպես նախաձեռնել են հաշվեգրման մեթոդի ներդրումը: Մասնավորապես, Էստոնիան գործընթացը սկսել է 1997 թ.: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ հաշվեգրման մեթոդին անցնելու անհրաժեշտությունը վերաբերում է նաև անցումային տնտեսություն ունեցող երկրներին: Զարգացած երկրների փորձը վկայում է, որ պետական կառավարման հատվածում հաշվեգրման մեթոդի ներդրումը պետական ֆինանսների կառավարման առումով ունի ակնհայտ առավելություններ, և ներդրման հետ կապված ծախսերն արդարացված են: Տասը տարուց ավելի տևող կառավարման բնագավառում ձեռք բերված փորձը հաշվեգրման մեթոդին անցնելու ճանապարհով ընթացող յուրաքանչյուր նոր երկրի հնարավորություն է տալիս նվազեցնել դրա հետ կապված ակնկալվող ծախսերը: Այս տեսանկյունից հաշվեգրման մեթոդին անցնելիս Հայաստանի Հանրապետությունը կարող է հիմնվել այդ բնագավառում ձեռք բերված միջազգային փորձի վրա, թեև անցումային տնտեսություն ունեցող երկրի դեպքում հաշվեգրման մեթոդի ներդրման ծրագիրն ավելի մեծ ռիսկեր է պարունակում, քան զարգացած երկրներում: Այդ իսկ պատճառով, նման աշխատանքների հետ կապված ծախսերի հաշվարկը, որը հիմնվում է ռիսկերի գնահատման վրա, կարող է տարբերվել զարգացած երկրի համանման հաշվարկից, նույնիսկ, եթե ներդրման

¹ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության («ՏՀԶԿ», OECD) «Պետական ծախսերի կառավարում», անցումային տնտեսություն ունեցող երկրների համար տեղեկագիր, գլուխ 11, 2001 :

հետևանքով ստացվող արդյունքներն ավելի մեծ են: Վերոնշյալի տրամաբանությամբ ավելի է կարևորվում հաշվեգրման մեթոդի ներդրման աշխատանքների հետ կապված ռիսկերի կառավարման խնդիրը: Այժմ տեսնենք, թե հաշվապահական հաշվառման բնագավառում այլ երկրներ ինչպիսի փորձ են կուտակել:

Նոր Զելանդիան աշխարհում առաջին երկիրն էր, որտեղ հանրային հատվածում 1980-ական թվականների վերջին ներդրվեցին հաշվեգրման մեթոդի վրա հիմնված հաշվապահական հաշվառման և հատկացումների համակարգերը: Այս առումով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նախքան հաշվեգրման մեթոդի վրա հիմնված հատկացումների համակարգի ներդրման գործընթացը նախաձեռնելու մասին որոշում կայացնելը, արդեն իրականացման փուլում էին հետևյալ միջոցառումները. դրամական միջոցների նկատմամբ կենտրոնացված հսկողության ուժեղացումը, ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով հաստատագրված տոկոսների և արտարժույթի ռիսկի նկատմամբ հսկողության ամրապնդումն ու կենտրոնացումը, սեփական կապիտալի հետ կապված ռիսկի նկատմամբ հսկողության խստացումը, դրամական միջոցների, բյուջետային պարտքերի, ֆինանսական ակտիվների և բաժնեմասային ներդրումների նկատմամբ ներքին հսկողության ուժեղացումը:

Բացի նշվածներից, զգալի աշխատանքներ էին կատարվել հատկացումների համակարգը բարեփոխելու ուղղությամբ, որը դրսևորված էր հետևյալ հիմնական գործոններով. 1970-ական թվականների կեսերին ծրագրային բյուջեի ներդրումը և ֆինանսական կառավարման մասնակի ապակենտրոնացումը չտվեցին ակնկալվող արդյունքները: Դրա պատճառներից մեկը հավանաբար այն էր, որ այդ ժամանակ դադարեցվեցին ծրագրային բյուջեի ներդրման ուղղությամբ լավ չմշակված աշխատանքները: 1980-ական թվականների կեսերին, երբ ֆինանսական կառավարման համակարգի բարեփոխումները կրկին դարձան օրակարգային, իշխանությունները սկսեցին քննարկել հատկացումների համակարգի արմատական բարեփոխումների խնդիրը: Ի վերջո ընտրվեց հաշվեգրման մեթոդի վրա հիմնված հատկացումների համակարգի ներդրման ճանապարհը:

1980-ական թվականների կեսերի մակրոտնտեսական ճգնաժամը իշխանություններին ստիպեց հանգել այն եզրակացության, որ ոչ առևտրային հատվածի ճկունությունը բարձրացնելու և, հետևաբար, առևտրային հատվածի վրա գործադրվող ճնշումը թեթևացնելու համար անհրաժեշտ են հանրային հատվածի արմատական բարեփոխումներ: Որոշվեց, որ դրա համար հանրային հատվածի կառավարման բնագավառում առաջնահերթորեն պահանջվում է հանրային հատվածի հաշվառման և հաշվետվությունների համակարգում օգտագործվող տվյալների առավելագույն ճկունություն, որն իր հերթին ենթադրում էր էական փոփոխություն հատկացումների համակարգում:

Չի կարելի պնդել, որ հատկացումների բարեփոխված համակարգը բարելավել է նաև պետական դրամական միջոցների նկատմամբ խորհրդարանի հսկողությունը: Առանձին նախարարությունների բյուջեները շարունակում են մնալ բարդ և ծավալուն: Մյուս կողմից, տվյալների կազմման բարելավված համակարգը

զգալիորեն դրական ազդեցություն ունեցավ պետական դրամական միջոցների նկատմամբ խորհրդարանի կողմից իրականացվող հսկողության վրա: Հանրության և օրենսդիր մարմինների ներկայացուցիչների համար մատչելի ֆինանսական տվյալների գրանցման սկզբունքներին և ձևերին համապատասխան հաշվեկշիռների պարբերական հրապարակման, ժամանակ առ ժամանակ հաշվեկշռի «Ծանոթագրություններ» բաժնի հոդվածների, ինչպես նաև ֆինանսական տվյալների հրապարակման շնորհիվ ամրապնդվել է օրենսդիր իշխանության պատկերացումը պետական ֆինանսների մասին: Բացի այդ, օրենսդիրը կարող է ուշադրությունը կենտրոնացնել այն հիմնական գործոնների վրա, որոնք ենթակա են վերջինիս հսկողությանը: Օրինակ՝ պետական ֆինանսներում ընդհանուր զուտ կապիտալի աճը և ընդհանուր ռիսկերի նվազեցումը Նոր Զելանդիայում ներկայումս ֆինանսական քաղաքականության հստակորեն սահմանված նպատակներ են, որոնց կողմնակից են քաղաքական լայն ուժերը. մի բան, որին հնարավոր չէր հասնել դրամարկդային մեթոդով վարվող հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների համակարգի դեպքում: Բարելավված հաշվապահական հաշվառումը տվել է էական դրական արդյունքներ: Մասնավորապես, բարելավվել է գործադիր մարմինների կողմից իրականացվող ֆինանսական հսկողությունը, գլխավորապես շրջանառու կապիտալի, ակտիվների և պարտավորությունների, կուտակված ծախսերի և եկամուտների, պարտավորությունների, պայմանական պարտավորությունների և ռիսկերի առումով:

Որպես հաշվառման ընդհանուր հենք, 1993 թ. սկսած Շվեդիայի պետական հատվածում կիրառվում է հաշվեգրման մեթոդը: Հաշվապահական բոլոր տվյալների հաշվառումը կատարվում է կազմակերպությունների մակարդակով, և այս առումով նախարարությունները նույնպես համարվում են առանձին կազմակերպություններ: Կազմվում են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) վրա հիմնվող պետության տարեկան հաշիվները, որոնք բաղկացած են գործառնությունների մասին հաշվետվությունից, հաշվեկշռից և միջոցների աղբյուրների և օգտագործման մասին հաշվետվությունից²:

ՀՀՄՍ-ի համաձայն, կազմակերպությունները պարտավոր են ընթացիկ ժամանակաշրջանում գրանցել բոլոր տնտեսական շարժերը: Նման հոդվածները պետք է հաշիվներում գրանցվեն նախքան գրանցումների ամփոփումը: Սա անհրաժեշտ է տվյալ ֆինանսական տարվա համապատասխան եկամուտներն ու ծախսերն արտացոլելու համար: Անհրաժեշտ է նաև գնահատել ակտիվների ու պարտավորությունների արժեքը, և այս առումով պետք է հաշվառել մաշվածքի ծախսերը: Սրա հետևանքով, հաշվապահական հաշվառումն ամբողջապես կատարվում է հաշվեգրման մեթոդի հիման վրա: Հիմնարկները կարող են, ըստ իրենց հայեցողության, նման տեսակի հոդվածները գրանցել ավելի հաճախ, քան միայն տարեկան կտրվածքով: Կառավարման ներքին տեղեկատվությունը

² Հաշվապահների միջազգային դաշնություն, [1996] «Հաշվեգրման մեթոդի վրա հիմնված հաշվապահական հաշվառման հեռանկարները», Հանրային հատվածի հանձնաժողով, 0-3 փաստաթուղթ, գլուխ 4:

բարելավելու նպատակով որոշ հիմնարկներում դա արվում է ամսական կտրվածքով:

Տնտեսական բնույթի իրադարձություններն արտաքին են համարվում այն դեպքում, եթե դրանցում ներգրավված են հիմնարկից դուրս գործող անձինք, այդ թվում՝ միևնույն իրավաբանական անձի (պետության) կառուցվածքում գործող կազմակերպությունները կամ մասնավոր ընկերությունները: Հիմնարկի տեսանկյունից, պետության հետ կատարվող հաշվարկները նույնպես համարվում են արտաքին գործառնություններ: Արտաքին տնտեսական բնույթի իրադարձություններն արտացոլող հաշիվները կառուցված են այնպես, որ դրանց միջոցով հնարավոր լինի սահմանված ժամանակացույցին համապատասխան ստանալ եկամուտների և ծախսերի, ինչպես նաև հաշվեկշռային տվյալները: Հետևաբար, միասնական հաշվային պլանը կարող է կիրառվել հիմնարկների մեծ մասի կողմից, առանց էական փոփոխություններ ենթադրելու:

Հիմնարկի եկամուտների և ծախսերի հաշվետվության մեջ արտացոլված հիմնական եկամտի աղբյուրը հատկացումներից ստացվող եկամուտն է, որը գրանցվում է այն պահին, երբ հիմնարկն իրացնում է պետական բյուջեից ծախս կատարելու իր իրավունքը: Մեկ այլ տարբերությունը վերաբերում է հիմնարկի տնօրինման տակ չգտնվող դրամական միջոցների, օրինակ՝ հարկերի հավաքումից ստացված միջոցների կամ էլ պետության կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց փոխանցվող օրինական վճարումների գրանցման բաժնին: Այս դեպքում, պետական բյուջեից փոխանցվող կամ պետական բյուջե անցնող միջոցների համար հիմնարկը գործում է որպես «միջնորդ»: Հաշվեկշիռը մասնավոր ընկերությունների հաշվեկշռից հիմնականում տարբերվում է պետության հետ հաշվարկների և հիմնարկի կապիտալի վերաբերյալ բաժինների առումով: Վերջինս համապատասխանում է մասնավոր ընկերության սեփական կապիտալին, սակայն բովանդակությամբ տարբեր է: Ակտիվները մշտապես գրանցվում են իրենց ձեռքբերման արժեքով, և դրանց մաշվածքը հաշվառվում է ըստ տարիների, հավասար համամասնությամբ, համաձայն ակտիվների շահագործման ժամկետների: Հաշվեկշռի և գործառնական ծախսերի մասին հաշվետվության տվյալները համախմբված ներկայացվում են դրամական միջոցների օգտագործման և դրանց աղբյուրների մասին հաշվետվության մեջ, որը բաղկացած է հինգ բաժիններից՝ գործառնություններ և ներդրումներ, վարկավորում, հարկերի հավաքում և տրանսֆերտներ: Ֆինանսական հոսքերի արտացոլման նպատակով յուրաքանչյուր բաժին հարմարեցվում է կարճաժամկետ պահանջների և պարտավորությունների գրանցմանը: Հատկացումների մասին հաշվետվության մեջ պետական բյուջեի հետ կատարված հաշվարկները ցույց են տրվում տեղաբաշխված հատկացումների և կանխատեսվող պետական եկամուտների հետ միասին:

Գործառնությունների արդյունքների մասին հաշվետվության մեջ յուրաքանչյուր հիմնարկ գրանցում է յուրաքանչյուր ստորաբաժանման խոշոր եկամուտներն ու ծախսերը, որակը և չափելի արդյունքները: Նման տեղեկատվությունը վերցվում է հիմնարկի ներքին կառավարման տվյալներից, որտեղ ներքին տնտեսական

իրադարձություններն արտացոլում են ծախսերի և եկամուտների բաշխումը հիմնարկի տարբեր ստորաբաժանումների միջև: Այդ տվյալներն էական նշանակություն ունեն հիմնարկի ներքին կառավարման և հսկողության տեսանկյունից: Բացի այդ, դրանք դրամարկղային կամ մասնակի հաշվեգրման մեթոդից ամբողջական հաշվեգրման մեթոդին անցնելու ամենահիմնական պատճառներից են: Քանի որ հիմնական միջոցների հաշվապահական հաշվառումը մեկն է այն արդյունքներից, որ ձեռք է բերվում նման հաշվառման միջոցով, ապա դրա հետ կապված բարելավվել է նաև ֆինանսական հսկողությունը և ներդրումներ կատարելու մասին որոշումների հիմքը:

Իսպանիայում հանրային հատվածի համար հաշվային նոր պլանն ընդունվել է 1994 թ. և կիրառվում է տարբեր մակարդակների (կենտրոնական, տարածաշրջանային և տեղական) մարմիններում: Որոշ տարբերություններ կան հաշվային պլանի և ՀՀՄՄ-երի միջև, որոնք արտացոլում են միայն հանրային հատվածին բնորոշ որոշ գործառնությունները և իրադարձությունները: Այդուհանդերձ, նշված տարբերությունները չեն հակասում հաշվապահական հաշվառման ընդհանուր հասկացություններին³: Օրինակ, 1994 թ. ընդունված հաշվային պլանը հիմնվում է հաշվապահական հաշվառման տասներկու սկզբունքների, այդ թվում՝ հաշվեգրման սկզբունքի վրա: Դրանցից ինը այն նույն սկզբունքներն են, որոնց հիման վրա կազմվել են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները, չնայած այն բանին, որ տարբեր ձևով են կիրառվում:

Պետության հաշվեկշռում և եկամուտների ու ծախսերի հաշվետվությունում հաշվեգրման մեթոդով չհաշվարկվող երկու ամենակարևոր բացառությունները հետևյալն են. ա) պետական կապիտալ ակտիվները, որոնք նախատեսվում են քաղաքացիների կողմից ուղղակի օգտագործման համար: Դրանք շինարարության իրականացման ժամանակ գրանցվում են որպես կապիտալ ներդրում և շինարարության ավարտից հետո դուրս են գրվում: Սա վերաբերում է ենթակառուցվածքներին, ինչպես նաև պաշտպանության և մշակույթի ոլորտների ակտիվներին: Հետևաբար, նշված կապիտալ ակտիվների գծով մաշվածք չի հաշվարկվում: Բ) Կապիտալ սուբսիդիաները գրանցվում են փոփոխված դրամարկղային մեթոդի միջոցով և ձևակերպվում եկամուտների բաժնում հավաքման ժամանակ կամ այն դեպքում, երբ նախատեսվում է դրանք հավաքել մինչև երեք ամիս ժամանակահատվածի ընթացքում: Սրա հետևանքով, հետագա ժամանակաշրջաններում հաշվեգրված եկամուտներ չեն գրանցվում:

Բյուջեների կատարման մասին հաշվետվություններում եկամուտներն ու ծախսերը գրանցվում են այն պահին, երբ կանխիկ դրամական միջոցները հավաքվել են կամ վճարվել, կամ էլ երբ ստացման կամ վճարման ենթակա գումարների մարման ժամկետը կարճ է, սովորաբար մինչև երեք ամիս: Բյուջեների կատարման մասին հաշվետվությունները կազմվում են կարճաժամկետ ֆինանսական, այլ ոչ տնտեսագիտական նպատակներով: Այսպիսով, Իսպանիայում հիմնականում

³ Նույն տեղում, գլուխ 3:

հատակ տարանջատում գոյություն ունի դրամարկղային մեթոդով գործող հատկացումների համակարգի և հաշվեգրման մեթոդի վրա հիմնված հաշվապահական հաշվառման ու հաշվետվությունների համակարգերի միջև:

Ֆրանսիան որոշել է ներդնել հաշվեգրման մեթոդի վրա հիմնված հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների համակարգերը՝ պահպանելով դրամարկղային մեթոդով գործող հատկացումների համակարգը: Ֆրանսիայի կառավարությունը նախատեսում է մոտ ժամանակներս հրատարակել նման որոշումը հիմնավորող հաշվետվությունները⁴:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար Ավստրալիան, Ֆինլանդիան, Հունաստանը և ԱՄՆ-ը ամբողջապես կիրառում են հաշվեգրման մեթոդը: Կանադայում, Իսլանդիայում և Իտալիայում պետական համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմվում են հաշվեգրման մեթոդի հիման վրա: Բացառություն են կազմում միայն ակտիվների կապիտալիզացումը կամ մաշվածքը: Նիդերլանդներում, Պորտուգալիայում, Շվեյցարիայում և Մեծ Բրիտանիայում հաշվեգրման մեթոդը կիրառվում է միայն գերատեսչությունների և հիմնարկների մակարդակով:

Ավստրալիայի և Մեծ Բրիտանիայի հատկացումների համակարգն ամբողջովին հիմնվում է հաշվեգրման մեթոդի վրա: Կանադայի, Ֆինլանդիայի, Իսլանդիայի և Իտալիայի հատկացումների համակարգում, բացառությամբ ակտիվների կապիտալիզացման կամ մաշվածքի, նույնպես կիրառվում է հաշվեգրման մեթոդը: Կանադան, Կորեան, Նիդերլանդները և Շվեյցարիան նախատեսում են ներդնել ամբողջապես հաշվեգրման մեթոդի վրա հիմնված հատկացումների համակարգ⁵:

Հոնկոնգի կառավարությունը նախատեսում է 2002 և 2003 թթ. սահմանել հաշվեգրման մեթոդի վրա հիմնված հաշիվներ, որոնք կլրացնեն դրամարկղային մեթոդի հիման վրա վարվող առկա հաշիվները: Կառավարությունը նման քայլը հիմնավորում է պետական դրամական միջոցների կառավարումը խստացնելու, ազգային հաշիվների թափանցիկությունը բարելավելու և ծախսերի հսկողությունն ու արդյունավետությունը բարձրացնելու խնդիրներով: Մասնավորապես, կառավարությունն ակնկալում է, որ հաշվեգրման մեթոդի հիման վրա վարվող հաշիվները կարտացոլեն պետական հաստատություններում ներդրումների, հիմնական միջոցների և ֆինանսական պարտավորությունների, օրինակ՝ պետական ծառայողների կենսաթոշակների վերաբերյալ ավելի ճշգրիտ տեղեկատվությունը⁶:

Հաշվի առնելով Հոնկոնգի կառավարության առանձնահատկությունները՝ կառավարությանն աջակցող խորհրդականների խումբն առաջարկել է որոշակիորեն

⁴ Պեթրո ժ., Զեկույց անցումային տնտեսություն ունեցող երկրների բյուջետային և գանձապետական բարեփոխումներին նվիրված աշխատաժողովում, Աստանա, 2002, ապրիլ:

⁵ ՏՀԶԿ, Հաշվեգրման մեթոդի վրա հիմնված հաշվապահական հաշվառումը և բյուջեների կազմումը անդամ-երկրներում, 2000, դեկտեմբեր:

⁶ Հաշվապահական հաշվառման բարեփոխումների միջազգային կենտրոնի Տեղեկագիր, 2001, հուլիս-օգոստոս:

սահմանափակել Հանրային հատված հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՀՀՄՄ) հետ համապատասխանության մակարդակը: ՀՀՀՀՄՄ-երը զգուշորեն կիրառելու պատճառներից մեկն այն է, որ նշված ստանդարտները որոշ առումով դեռևս մշակման նախնական փուլում են:

Հարավ-աֆրիկյան Հանրապետությունը հայտարարել է, որ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների մշակման համար հիմք են ծառայելու ՀՀՀՀՄՄ-երը: Հարավ-աֆրիկյան Հանրապետությունն առաջին երկիրն է, որը պաշտոնապես հայտարարում է այն մասին, որ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների մշակման համար որպես հիմք են ընդունվելու ՀՀՀՀՄՄ-երը⁷:

Էստոնիան հանրային հատվածում հաշվեգրման մեթոդի ներդրման գործընթացն սկսել է 1997 թ., իսկ պետական մարմինները նշված մեթոդի հիման վրա հաշվետվություններ ներկայացնում են 2001 թվականից: Հաշվապահական հաշվառման ստանդարտներն հիմնականում համապատասխանում են հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին: Այդուհանդերձ, ընդհանուր տեղեկատվությունը դեռևս լիարժեք չէ, որպեսզի հնարավոր լինի կազմել ամբողջական հաշվեկշիռ, իսկ ընդհանուր բյուջեն դեռևս շարունակում է կազմվել դրամարկդային մեթոդով⁸:

ԱՄՆ-ի կողմից ընդունված և միջազգային գործառնություն կիրառություն գտած Պետական ֆինանսների վիճակագրության (GFS 2001, այսուհետև՝ ՊՖՎ) 2001-ի հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով Հունգարիայում աշխատանքներ են ծավալվում հաշվեգրման մեթոդի վրա հիմնված մի խումբ հաշիվներ սահմանելու ուղղությամբ⁹:

Մոնղոլիան սկսել է ֆինանսական կառավարման բարեփոխման լայնածավալ ծրագրի իրականացումը, ինչը, ի թիվս այլոց, էական փոփոխություններ է նախատեսում հատկացումների համակարգում, ինչպես նաև հաշվեգրման մեթոդի ներդրում՝ հաշվապահական հաշվառման և տվյալների կազմման համակարգերում:

Բուլղարիան ավարտում է աշխատանքներն ընդհանուր պետական հատվածի համար նոր միասնական հաշվային պլանի մշակման ուղղությամբ:

Նշված հաշվային պլանը համապատասխանում է Բուլղարիայի հաշվապահական հաշվառման ազգային ստանդարտներին և բավարար հիմքեր է ապահովում հաշվեգրման մեթոդով հաշվապահական հաշվառման իրականացման համար¹⁰:

Հաշվեգրման մեթոդին անցնելը Ղազախստանը համարում է իր հետագա առաջնահերթ քայլերից մեկը¹¹:

⁷ Նույն տեղում:

⁸ ԱՄՆ. Էստոնիայի Հանրապետություն. Ստանդարտների և կոդերի հետ համապատասխանության և ֆինանսական թափանցիկության մասին հաշվետվություն, 2001, հուլիս:

⁹ ԱՄՆ. Հունգարիա. Հաշվետվություն ստանդարտների և կոդերի հետ համապատասխանության մասին, 2001, մայիս:

¹⁰ ԱՄՆ. Բուլղարիայի կառավարության տնտեսական քաղաքականությունների վերաբերյալ հուշագիր և նկատառումների նամակ, 2000, օգոստոսի 18:

Նախկին խորհրդային հանրապետություններից շատերն ընդունում են այն կապը, որ գոյություն ունի ՊՖՎ 2001-ի իրականացման անհրաժեշտության ու գերատեսչություններում հաշվեգրման մեթոդով վարվող հաշվառումը բարելավելու և այն գանձապետարանի հաշվապահական հաշվառման հետ համապատասխանեցնելու անհրաժեշտության միջև:

Նախկին խորհրդային հանրապետությունների մեծ մասի հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունների կազմումը հիմնվում է 1987 թ. սահմանված հրահանգի վրա: Բյուջետային հիմնարկների հաշվապահական հաշվառման համակարգը պարունակում է հաշվեգրման մեթոդի վրա հիմնված հաշվառման տարրերի մեծ մասը: Ի լրումն դրամարկղային սկզբունքով կատարվող գործառնությունների, համակարգերում գրանցվում են նյութական ակտիվները, հիմնական միջոցները, ֆինանսական ակտիվները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը: Համակարգը ներառում է տնտեսական հոսքերը, օրինակ՝ մաշվածքը: Այդուհանդերձ, գնահատման և գրանցման սկզբունքները, ի տարբերություն հաշվապահական հաշվառման ստանդարտների, դեռևս չեն սահմանվել:

Լիտվան նախկին խորհրդային հանրապետություններից առաջինն էր, որտեղ փորձեր արվեցին ծախսող միավորների վճարային և հաշվապահական հաշվառման համակարգերն ուղղակիորեն միավորել գանձապետական համակարգում: Եվրոմիության անդամ դառնալու համար Լիտվան պետք է ընդուներ նրա սահմանած հաշվապահական հաշվառման ստանդարտները: Բյուջեի, հաշվապահական հաշվառման և վճարումների համար նախատեսված համակարգչային համակարգը Լիտվայում գործում էր ծախսող միավորներում և ճյուղային նախարարությունների միջոցով ծախսող միավորներն էլեկտրոնային եղանակով միացնում էր կենտրոնական գանձապետարանի հետ: Վճարումները մատակարարողներին կատարվում էին էլեկտրոնային եղանակով գանձապետական միասնական հաշվի միջոցով, գանձապետարանի կողմից հաստատվելուց հետո: Դրա գործնական կիրառման արդյունքներից մեկը եղավ այն, որ համակարգում արմատավորվեց ընդհանուր հաշվային պլան՝ ծախսային տվյալների մշակման բոլոր մակարդակներում: Միասնական հաշվային պլանը ներառում էր շարժերը և պաշարները: Ներկայումս համակարգը գործում է ավելի քան 500 ծախսող միավորներում (սրանք այն խոշոր միավորներն են, որտեղ օրական կատարվում են մեկից ավելի գործառնություններ): Որևէ գործառնություն համակարգի մեջ մուտքագրելու միջոցով հնարավոր է շարժերի և պաշարների հաշիվներում ունենալ բոլոր համապատասխան մուտքագրումները:

Ռուսաստանը սկսել է գանձապետարանի արդիականացման ծրագիր, որի իրականացման ժամկետը յոթ տարի է: Այն ներառում է օրենսդրական և կազմակեր-

¹¹ *Ռամանուքի Ս.*, Երկրների փորձի, քաղաքականության հարցերի և բարեփոխումների հաջորդականության մասին, ԱՄՆ-ի հարկաբյուջետային հարցերով մշտական խորհրդականների աշխատաժողով, Ղազախստան (Աստանա), 2002, ապրիլի 7-8-ը:

պական բնույթի բարեփոխումները, ինչպես նաև համակարգերի նորացումը: Արդիականացման հիմնական նպատակներից մեկը հաշվապահական հաշվառման համակարգում հաշվեգրման մեթոդի աստիճանական ներդրումն է: Նախապատրաստական փուլը ներառում է ծախսող միավորների, ճյուղային նախարարությունների և գանձապետարանի համար միասնական հաշվային պլանի մշակումն ու ներդրումը: Նախատեսվում է հաշվային պլանը մշակել այնպես, որ հնարավոր լինի դրամարկայինից անցնել հաշվեգրման մեթոդի: Այն նաև կհամապատասխանի ՊՖՎ 2001-ին: Միաժամանակ, բյուջետային դասակարգումը կհամապատասխանեցվի նախատեսվող հաշվային պլանին:

Ուկրաինայում քայլեր են ձեռնարկվում գանձապետարանի հաշվային պլանի մշակման ուղղությամբ՝ միաժամանակ այն համապատասխանեցնելով բանկային համակարգի քլիրինգային գործառնությունների պահանջներին: Ծախսող միավորները շարունակում են կիրառել նախկին ԽՍՀՄ-ի հաշվային պլանը, սակայն նախատեսվում է ուսումնասիրել ծախսող միավորների հաշվապահական հաշվառման պահանջները և սահմանել միասնական հաշվային պլան:

ОПЫТ НЕКОТОРЫХ СТРАН ПО РЕФОРМИРОВАНИЮ БУХГАЛТЕРСКОГО УЧЕТА В ОБЩЕСТВЕННОМ СЕКТОРЕ

ДЖАНДЖУГАЗЯН А. С., БРУТЯН К. А.

Резюме

В некоторых странах ведение бухгалтерского учета и составление отчетности общественного сектора осуществляется на основе накопительного (метод начислений) метода. Ряд стран объявили о своем намерении внедрить упомянутый метод. Третья группа стран лишь рассматривает возможность осуществления перехода на использование накопительного метода в ближайшие годы.